Ա Ռ Ա Ր Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 25-Ի ԹԻՎ 254-Ա, ՄԱՅԻՍԻ 27-Ի ԹԻՎ 255-Ա, ՄԱՅԻՍԻ 30-Ի ԹԻՎ ԹԻՎ 256-Ա, 258 ԵՎ 259 ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ 254-Ա որոշման վերնագրում և 1-ին կետում փոփոխվող որոշման հերթական համարը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին։

Թիվ 255-Ա որոշման նախաբանում «N1 հավելվածով» թիվը և բառն ավելորդ են։

Թիվ 256-Ա որոշման նախաբանում «որոշման» բառից հետո անհրաժեշտ է գրառել «1-ին կետով հաստատված կարգի» բառերը ։

Թիվ 258 որոշման 2-րդ կետում օրաթերթի անվանումը սխալ է գրառված, բացի այդ որոշման 3-րդ կետում «հավելված» բառի փոխարեն անհրաժեշտ է գրառել «N1, N2, N3 և N4 հավելվածների» թվերը և բառը։

Որոշմամբ հաստատված թիվ 4 հավելվածում աճուրդային եղանակով օտարվող հողամասի գործառնական նշանակությունը չի համապատասխանում օտարման նպատակին (հիմք՝ ՀՀ հողային օրենսգրքի 8-րդ հոդվածի 1-ին մաս, 10-րդ հոդվածի 4-րդ մաս)։

Թիվ թիվ 258 և 259 որոշումների հերթական համարներից անմիջապես հետո անհրաժեշտ է նշում կատարել իրավական ակտի բնույթի մասին։

Թիվ 259 որոշմանը կից ներկայացված N1 հավելվածի վավերապայմաններում որոշման հերթական համարը տարբեր է։

23.06.2022 թ.